


91  
2 - 69

1909



1525

94



ԿՐԱՆ Հ 20 ԿՐԱ

18 JUN 2013

1525 5 OCT 2013

Հոյս է տեսել և վաճառւում է  
[REDACTED]

## ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱԼԳՐՔՈՅՑԿԸ

Պարունակում է 1) մօտ 10,000 բառերից  
ցանկ, 2) Ուղղագրական կանոններ: Օժանդակ  
ձեռնարկ հայոց լեզուի ուղղագրութիւնը սովորելու համար. 191 երես: Գինը 30 կոպէկից  
իջեցրած է 20 կոպէկի:

Պ. Ղազարոս Աղայեանը «Սուրհանդակ» ի.

1909 թ. № 27-ի մէջ գրում է այս գրքոյկի մասին. «Պ. Ա. Աբեղեանի այս գրքոյկը շատ գեղեցիկ է կազմւած և շատ պիտանի կարող է լինել թէ ուսուցիչների և թէ մանաւանդ ուսանողների համար: Ցանկալի է, որ մեր ուսուցիչները ձեռքի տակ ունենան և իրենց աշակերտներին էլ ոչ միայն խորհուրդ տան, այլ և պարտաւորեցնեն զնել և օգուտ բաղել թէ բառարանից և թէ ուղղագրական կանոններից... Իր մատչելի գնով, յոյս ունենք, հեշտութեամբ կտարածւի և շուտով կունենայ իր երկրորդ տպագրութիւնը աւելի ընդարձակ... Ի վերջոյ յաջողութիւն եմ ցանկանում պ. Աբեղեանին իր նոր ձեռնարկութեան մէջ, որ ըստ ամենայնի ուղիղ շաւղի վրայ է կանգնած մայրենի լեզուի ուսուցման վերաբերմամբ»:

31  
-69  
4  
V  
աշխարհագրական պատկ. գրադարան  
[REDACTED] 3


«ԵՐԿՐԻ ՇՈՒԽՇԵՐ»

«ԵՐԿՐԻ ՇՈՒԽՇԵՐ»

№ 2:

ԶԻՒՄԱՊԱՏ ԼԵՐՆԵՐ

ԱՃԽԱՐՀԵԴՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ 7  
1909

## Դ Ե Պ Ի Մ Ա Ս Ի Ս

### I.

1. 1903 թ. սեպտեմբերի 18-ին սկսւեց մեր խմբի վերըելը դէպի Մասիս կամ Արարատ սարի գագաթը:

Խմբի առաջից գնում էին բեռնակիր քիւրդերը՝ ծանրոցները կապած թիկունքներին. նրանք բարձրաձայն աղաղակ—խօսակցութիւնով թնդացնում էին ձորահովիտը: Նրանց ետևից դանդաղ առաջ էին շարժւում մի քանի ձիւտորներ արշաւախմբի անդամներից, որոնց մէջ էի և ես: Մեր ետևից ոտքով, ալպեան երկայն գաւազանները ձեռքերին, գալիս էին արշաւախմբի մնացած անդամները:

Երկու ժամ անընդհատ բարձրանալուց յետոյ՝ մենք հասանք մի բարձրադիր, լայն տափարակի. սրա եզերքին, ուղիղ ձորագլխի վրայ, կանգնած է մի ահագին միապաղաղ քարաժայու. աև է նաև փայլուն, կարծես դիտմամբ յդկւածու կոկւած կողերով:

Ես աներկիւղ նստում եմ ժայռի գագաթին ու հայեացքս ուղղում դէպի վայր: Եմ առաջ բացւում է մի անսահման տարածութիւն, որի ուղիղ մէջ տեղում կանգնած է Փոքր Մասիսը իր լայն հիմքից հաւասարապէս դէպի վեր, դէպի կոնաձև գագաթը բարձրացող կողերով: Այժմ

Ես տեսնում եմ նրա հըաբխային բաժակի (բերանի, խառնարանի) բոլորակ, կարծես մարդկային ձեռքով քաշած, կանոնաւր շրջագծի մեծ մասը, որի կենտրոնում բարձրանուած են գորշդեղնաւուն, լեռան ստորոտից անտեսանելի բլուրներ:

Կարաւանը հանգստացաւ. նա նորից առաջ է գնում: Բեռնակիր քիւրդերը, չը նայելով մէջքերին կապած ծանրութիւններին, արագ և աշխոյժ փոխում են ոտները. մենք, ձիաւորներս, հազիւ ենք համարում նրանց ետևից. հետևակ. ընկերներս մնացել են յետ. նրանք այլ ևս չեն երևում: Շանապարհը քանի գնում աւելի և աւելի դժւարանում է. քարերն ու ժայռերը բազմանում են, բուսականութիւնը փոքր առ փոքր աղքատանում ու չքանում է: Մենք մտնում ենք Արարատի ժայռուտների միահեծան տիրապետութեան սահմանը:

Այն հազիւ նշմարելի արահետը, որով մենք մինչև այժմ առաջ էինք գնում, արդէն կորել է. ձիերը քրանել են և հետևով ու լարելով իրանց ամբողջ ոյժը՝ հազիւ կարողանում են մի բռպէտում մի քանի քայլ փոխել:

Զիով այլ ևս առաջ զնալ անհնար էր. արգէն սկսում էր մի թեք, դժւարակոխ զառիվեր, որի վրայ բարձրանալու համար՝ լեռնային ճանապարհներին այնքան ընտելացած բլուրդերն

անգամ ստիպւած էին լարել իրանց բոլոր ոյժերը: — Հասանք, հասանք, — լուեցյանկարծ բարձրից մեր ընկերներից մէկի ձայնը, որ բեռնակիր քիւրդերի և առաջնորդի հետ միասին առաջ էր անցել. — հասանք գիշերելու տեղին:

Եւ ժամանակ էր հասնելու. մութն ընկնում էր. փշում էր արդէն ցուրտ, սառեցնող քամի. ամենքը քաղցած էին և հանգիստ էին խընդրում:

Մասիսի հարաւ-արևելեան կողի այն վերջին տափարակը, որի վրայ մենք կանգ առանք դիշերելու, բաւական մեծ տարածութիւն է բռնում: Երբ հետևեալ առաւօտեան կանուխ սկսւեց քիւրդերի գոռգոռոց — խօսակցութիւնը՝ ես վեր կացայ տեղիցս և կամաց դուրս եկայ վրանից: Տափարակը ծածկւած էր կարկտի սպիտակ հատիկներով. առուն սառել էր և կտրել իր դուրեկան քլըլոցը, որին այնքան հաճութեամբ ես ականջ էի զնում երէկ: Մասիսի գագաթն ու կողերը ամբողջովին ծածկւած էին թանձը, մութ մառախուղով. մերձակայ ձիւնարանը հազիւ երեւում էր սպիտակ մշուշի միջից:

2. Առաւօտւայ թէյից յետոյ՝ մենք բոլորս, կուչ եկած ցրտից, տխուր կանգնել էինք վրանի մօտ և հայեացըներս ուղղել դէպի Մասիսի մառախլապատ գագաթը. ամեն մէկը մեզանից ունէր իր առանիձն մտածմունքը. քամին վզզում

ու ոռնում էր կատաղութեամբ. լեռան վերնակողերի ժայռերն ահարկու հայեացըով նայուժ էին բարձրից... «Գնալ արդեօք առաջ, դէպի այդ սարսեցնող, անհիւրընկալ քարակոյտերը, դէպի այդ մութ ամպերը ու ենթարկել կեանքը ամեն տեսակ վտանգի, թէ յետ դառնալ դէպի տաքն ու հանդիսար», —մտածում էր մեզանից ամեն մէկը:

Եւ խմբի անդամների մեծամասնութիւնը առաջ շարժւեց: Նրանց հետ էի և ես: Ժամերն անցնում էին ժամերի ետևից. առանց համարեա դադար առնելու, լարած մեր բոլոր ոյժերը՝ մենք մազլցում էինք դէպի վեր. սակայն Մասիսի դիւթական սպիտակահեր կատարը կանգնած էր նոյն անմատչելի հեռաւորութեան ու բարձրութեան վրայ և, կարծես, մազաչափ անդամ մենք չէինք մօտենում մեր նպատակին:

Անցան ժամեր, անցաւ և կէսօրը —ոչ ոք մեզանից չէր մտածում ուտելու կամ հանգտանալու մասին: Մենք արդէն դտնում էինք մօտ 15,000 ոտնաչափ բարձրութեան վրայ, ուրեմն աւելի վեր, քան Փոքր-Մասիսի և Սրազածի կատարները և համարես մօտ կազբէկի բարձրութեան: Յաւիտենական ձիւների միջից ես ձգում էի հայեացքո դէպի վայր, դէպի իմ առաջ բացւած անեղը, անծայրածիր տարածութիւնը՝ ողողած արեի պայծառ ճառագայթներով:

Ժամի երեքին մօտ էր արդէն, որ բ'ո՞նակիր քիւրդերը կանգ առան մի տեղ, ձիւների վրայ, և յայտնեցին, որ այլ ևս առաջ գնալ չեն կարող: Եւ մենք պիտի գեշերէինք այդտեղ:

Երեկոն վրա հասաւ. քամին, որ իր առանձին քմահաճոյքներն ու երաժշտական նւազներըն ունի Մասիսի բարձունքներում, դադարեց:

Հետևեալ առաւօտեան ընկերներս զարթեցին, երբ այգը բացւում էր:

— Ա՛խ, ինչ գեղեցիկ է, բացականչեց մէկը, քնաթաթախ աչքերը տրորելով:

— Ո՞րպիսի հրաշալիք...

— Ծագում է, արեւ ծագում է, նայեցէք, — նորից լւեցին մի քանի բացականչութիւններ իրար հետ և ես նորից ուղղեցի հայեացքս դէպի արեւելք:

Ոչ այն կէտից, ուր ես ակնդէտ նայում էի առաջ, այլ մի քիչ հեռու՝ դէպի հարաւ նրանից՝ կարծես առաջ հրելով լեռնային բարձր կատարները և ինքն իրան վեր-վեր ձգելով ու խաղալով՝ արագ-արագ բարձրանում էր մի հրաշէկ, բոսորային գունդ, ցերեկի աննման լուսատուն — ամենազեղեցիկ ստեղծւածը ամբողջ տիեզերքում: Մասիսի կատարի արեւելահայեաց ձիւնարանի մի հսկայական բոլորակ կտոր, որ երկում էր իմ կանգնած տեղից, վառւում ու փայլում

էր, ինչպէս մի առասպելական վարդ, ինչպէս մի կախարդական կարմրաթուշ ինձոր՝ կախւած երկնքից։ Ուղիղ գագաթի տակ, փոքր ինչ հարաւ վարդ—ծիւնարանից, այժմ այնպէս պարզ, այնպէս մեկին երեռւմ էին խրոխտ քարաժայութ՝ թեթևակի լուսաւորւած գունաթափ—կարմիր շողերով՝ որ մի վայրկեան կասկած շարժւեց իմ սրտում—պիտի կարողանանք արդեօք մենք յաղթահարել այդ հսկաներին։

Մենք շտապեցինք ճանապարհ ընկնել դէպի վեր՝ կէսօրին Մասիսի գագաթը հասնելու յուսով։ Մենք բարձրանում էինք վերև մի լայնածաւալ ծիւնարանի եղերքով, որի ողորկ, սառած, փալլուն, ահուելի թեքւածքը զարհուրանք էր աղդում ամենքին։ Տեղ-տեղ մենք ստիպւած էինք, ալպեան գաւազանի օգնութեամբ, կոխել նոյն իսկ նրա ափերը՝ խուսափելու համար ահագին ժայռակոյտերից։

Վերելքի այդ ամենադժւար ժամերին ես կողըրել էի ժամանակի և տարածութեան գաղափարը. ըոպէն ինձ թւում էր ժամ, մի քանի քայլը—ահագին ճանապարհ. և որ ամենից գլխաւորն է՝ մեր շնչառութիւնը սկսել էր դըժւարանալ. կարծես մենք տանում էինք դէպի վեր ոչ մեր մարմնի սովորական ծանրութիւնը միայն, այլ ահագին բեռներ. ինձ թւում էր, որ ես լծւած եմ մի ծանը սայլի և սայլը անհնա-

րին ուժով քաշում է ինձ դէպի վայր։

1—1<sup>1</sup>/2 ժամից յետոյ, երբ մենք, զլուխներս կախած, առանց այս ու այն կողմ նայելու, շնչառառ հեալով, մի կերպ քարշ էինք տալիս ոտներս դէպի վեր, լսվեց յանկարծ մեր ուղեկից բժիշկ Շտրէյխէրի ձայնը վերևից։—

—Ուռա, հասանք, հասանք։


—Ուռա, կրկնեցինք մենք փոքր ինչ ներքեկից և ոյժ տւինք ուսներիս։

Մի քանի ըրպէից յետոյ մենք արդէն կանգնած էինք Մասիսի ծիւնապատ գագաթի ժայռոտ շրթունքին։

3. 25—30 քայլ հեռու մեզանից, գագաթի ամենաբարձր կէտի վրայ, խրւած յաւիտենական ծիւնի ու սառոյցի մէջ, փոքր ինչ թեքւած դէպի հարաւ-արևելք, կանգնած էր օգերեսոյթաբանական կայարանի չորսոտնեայ նեղ ու բարձր փայտեայ շինւածքը. հարկաւոր էր համնել նրան։

բայց դա հեշտ չէր. քամին, որ անընդհատ փշում էր ամբողջ ճանապարհին, գագաթի վրայ կրկնապատկեց իր զօրութիւնը. անցնել այդ 25—30 քայլն առանց օժանդակ միջոցի անհնար էր. գագաթը ամբողջովին ծածկւած էր սառցանման, ամուր, փայլուն ծիւնի հսկայական շերտով, որ զգալի կերպով թեքւած էր դէպի արևելք. մի անզգոյշ քայլ, քամու մի զօրեղ շունչ՝ և մենք կը գլորէինք դէպի Մասիսի անյատակ վիհը—

գէպի ս. Յակոբի պատառւածքը. ուստի մեր միջի ամենից աւելի քաջն և անձնազոհը, բժիշկ



Շարէյխէրը, կապեց մէջքից մի հաստ թոկ, որ մենք վերցրել էինք մեզ հետ, հադաւ երկաթեայ սուր գամերով կօշկատակեր, վերցրեց ալպեան

երկու գաւազան և առաջ ընկաւ: Դողդողալով և չղային թափով խրում էր նա կօշիկներն ու երկու գաւազանները սառոյց-ձիւնի մէջ. մենք սըրտատը սպասում էինք նրա անվեհեր քաջագործութեան ելքին. վերջապէս նա հասաւ կայարանին. քանդելով թոկը մէջքից, մի ծայրը կապեց կայարանի սիւնին. թոկի միւս ծայրը գըտնւում էր առաջնորդ Ահմէդ-բէկի ձեռքում: Բըռնելով մի ձեռքով պինդ ձգւած թոկից, իսկ միւսով ամուր-ամուր խրելով գաւազանը ձիւնի մէջ մենք էլ իրար ետեից հասանք կայարանին: Մենք գտնւում էինք արդէն Մասկանի հարաւարեելեան գագաթի ամենաբարձր կէտի վրայ...

4. Օ՛, անկրկնելի բոպէներ, օ, անմոռաց յիշատակ. Մոլորւած, սառած աչքերով ես մի դանդաղ հայեացք ձգեցի հայրենի լեռան բոլորակ, ձիւնափայլ, անբիծ գագաթին. մի այլ դանդաղ ու ծանր հայեացք դէպի վայր, դէպի հայրենի խըղճուկ աշխարհը՝ այնպիսի լուռ ու երկիւղած խոնարհութեամբ բոլորւած ծերունի լեռան շուրջը՝ ու ծունկ չոքեցի: Ես դրի երեսս հայրենի լեռան սառն գագաթին ու սկսեցի հեկեկալ... հեկեկալ անզուսպ, սանձարձակ, վաղուց զսպւած արտասուքի այրող դառնութեամբ... Տարածելով ձեռքերս՝ ես փայփայում էի ծերունի լեռան սպիտակ վարսերը, քսում էի երեսս նրա սառած երեսին, անյագուրդ աղահութեամբ համբուրում

էի նրա ձիւնեղին ճակատը, անսահման կարօտով տրորում էի այտերս նրա սառոյց-այտերին ու խելագարի նման կրկնում անընդհատ.—ասա, խօսիր, իմ անգին, իմ հոգի, իմ խղճուկ... Ասա ինձ քո վիշտդ, պատմիր դարերով ամբարւած ցաւերդ... Երբ սև գիշերին, մոայլոտ ամպեր հաւաքած գլխիդ՝ հուր ես շաղ տալիս աշխարհի վրայ ու լուսաւորում մի խաւար երկիր, ուր սարսափահար՝ մահւան երկիւղով բռնւած դողում ենք մենք խաւարի ահեղ ճնշումից, ասա, չես ուզում արդեօք դու վառել քո բոց—կրակով վախկոտ սրտերը ու քո շանթերդ դնել նըրանց մէջ. կամ երբ փոթորկի ահեղ ժամերին՝ հուր—կայծակներով ճեղբում ես ամպերն երկնքի վրայ, ասա, չես ուղղում արդեօք քո կայծակըն անգութ, անողորմ այն էակի դէմ, որ այնքան անսիրտ, այնքան անտարբեր նայում է բարձրից դարեր շարունակ... Խօսիր, իմ անգին, բաց ինձ քո սիրոդ...

Փոքր ինչ յետոյ, ես սկսեցի դիտել Մասիսի գագաթի մանրամասնութիւնները. իր ամբողջութեամբ գագաթը բոլորակ է, 200—250 սաժէնաշափ շրջագծով. բայց այդ ամբողջութիւնը մի ձորակով բաժանուում է համարեա երկու հաւասար կիսագնդերի - երկու գագաթների. ձորակի լայնութիւնը, երկի, աւելի չլինի 70—80 սաժէնից. իսկ խորութիւնը 9—10 սա-

ժէնից. գագաթներից մէկը՝ հիւսիս-արևմտեանը նկատելի կերպով բարձր է միւսից՝ հարաւ-արևելեանից. բայց այդ բարձրութիւնը, իմ աչքի չափով, յամենայն դէպս աւելի չէ 15—20 սանչափից: Զարմանալին այն էր, որ Մասիսի խոր ձիւներով ու սառոյցներով ծածկւած գլուխը ունէր մի տեղ մի փոքրիկ... բիծ, երկի արդարացնելու համար այն ասացւածքը, թէ անբիծ չէ նաև արեւ: 40—50 քայլի հեռաւորութիւնից մենք տեսնում էինք գագաթի հիւսիսարևելեան ափի մօտ մի փոքրիկ տարածութիւն՝ բոլորովին բաց ու աղատ ձիւնից. նա ծածկւած էր սև հողով ու բարերով և նրա վրա շարւած էր մի արշին բարձրութեան՝ բոլորակածե, ցածր պատւար մանր ու խոշոր քարերից. Օդի ամենաբարձր ջերմութիւնը Մասիսի գագաթին, սուերի մէջ, աւելի չէ գերօյից, իսկ ցուրտը հասնում է—50 աստիճանի:

Ես այդ ժամանակ քամուց պաշտպանւելու համար՝ կանգնած մի սաժէնաչափ բարձրութիւն ունեցող սառած ձիւնի փոքրիկ բլլակի առաջ, որ հաւաքւել էր կայարանի հարաւ-արևմտեան սիւնի մօտ, դիտում էի այն լայնածաւալ, մօտ 17,000 ստնաչափ բարձրութիւնից:

Առենից առաջ ես հայեացքս ուղեցի դէպի հիւսիս, դէպի մեր հայրենի հին բնագաւառը. այնտեղ երկայնանիստ լայն փոււածքով հիւսիս-

արևմուտքից դէպի հարաւ-արևելք տարածւում է Արարատեան դաշտը։ Աննման գեղեցիկ է այդ դաշտը իր ամբողջութեամբ։ Դիտակի օգնութեամբ ես տեսնում եմ անհամար գիւղեր՝ երբեմ մօտ-մօտ, երբեմն և հեռու իրարից՝ ցրւած ովագիսների զմբուխտ ծոցի մէջ։ տեսնում եմ մօտիկ՝ առաջիս, դաշտի բուն կենտրոննում, արձակ-համարձակ փուած դալարագեղ մի ծովակ և սկսում եմ որոնելնրա մէջ ծանօթ շինւածքներ։

Իմ դէմ յանդիման կանգնած է Արագածը. նա աջ ու ձախ փուած է իր երկայն, ահագին թևերը և անհամար բլուրներով, ձորերով ու դարաւանդներով ծածկւած կուրծքը ուղղել դէպի Արարատեան դաշտը։ Շիրակի բարձրագլուխ հսկան բոլորովին այլ կերպարանք ունի այստեղից։ Յածը է նա, լայնութեան վրայ ուռած ու փքւած՝ կարծես մէկը հուժկու ձեռքով խփել է նրա դագաթին և խրել պարանոցը լեռան լայն կրծքի մէջ։

Փոքը ինչ հեռու Արագածից, դէպի արևելք, երեսում են Արայի լեառը, Մայմեխը, հիւսիս-արևելքում Գեղամայ լեռների շարքերը, տեղ-տեղ ձիւնապատ գագաթներով՝ իսկ հեռու—հեռու հիւսիսում, մշուշի թանձր քօղով պատած, կանգնած է Կովկասեան լեռների հսկայական շղթան։ անհամար գագաթներ շարւած են այստեղ կողք կողքի և թւում է քեզ, թէ դա մի

ծով է, մի ովկանոս, որի վրայ փոթորկի ժամին բարձրանում և իջնում են վիթխարի ալիքներ։ Զիւնագարդ հսկաները, մէկն արևմուտքում, իսկ երկու-երեքը ուղիղ իմ դէմ յանդիման, պարգ երևեցնում են իրանց գլուխները մշուշի միջից։ Այս ծերունի Մասիսը անթարթ հայեացքով միշտ նայում ու տեսնում է իր բաղդակից ծերուկ ելքօրուսին։ Իվ կարող է ասել, թէ ինչ են խօսում իրար հետ գաղանաբար ձիւն ու սառուցով շղթայւած այդ հսկաները... Հիւսիս-արևմտքում աւելի ևս թանձր մշուշով պատած, երեսում է մի կորնթարթ, բաւականաշափ երկայն, կարծես, կապոյտ գիծ։ Ի՞նչ է այդ. արդեօք Սև ծովը չէ դա, որ լեռների անվերջ խառնւածքի միջից գտել է մի բաց տեղ և իր անհանդար ալիքները երևեցնում է Մասիսին։

Արևելքում, Արաքսի ընդարձակ հովտի հեռաւոր սահմաններում, ցիր ու ցան բարձրանում-իջնում են բազմաթիւ մանր ու խոշոր, գորշ-կարմրաւուն բլուրներ։ Նրանց ետեսում կանգնած են Զանգեզուրի և ապա Ղարաբաղի լեռները։

Արևելահարաւից աննման սիրուն ու գեղեցիկ է Արաքսի լայն, անծայր հովիտը. սրա մէջ տեղում անհամար քմահաճ պտոյտներով հոսում, անցնում է մայր-Արաքսը. նրա ափերի ամբողջ երկարութիւնը, որքան միայն կարող է կտրել մարդու աչքը, ծածկւած է դալար կանաչուանե-

Եի անընդհատ ժաղաւէնով:

Հարաւի մերձակայ տեսարանը ամբողջովին բռնել է Փոքր-Մասիսը իր ամփոփ ստորոտներով:

Արևմտեան հովիտը լիքն է լնդարձակ քարքարուտներով. այդ հովտի վերին՝ հիւսիսային մասը պատկանում է Թիւլքիային և կազմում է Բայազէդի սանջակի մի գաւառակը՝ ստորին, հարաւային մասը մտնում է Մակուի պարսկական խանութեան մէջ:

Հարաւային կողմում, Փոքր-Մասիսի գագաթի վրայից և ապա հարաւ արևմուտքից, հեռու երեսում է Կորդուաց լեռների շղթան, որ մի հրոկայական բազուկով պտոյտ է գործում ու միանում Տաւրոսի և Վասպուրականի լեռների հետ:

Հրաշալի են արևմուտքում և արևմտահարաւում Բարձր-Հայքի, Մասունի և Վասպուրականի լեռները Արարատի գագաթից. շալք-շալք, մէկը միւսից յետոյ, մէկը միւսից բարձր, կանդնած են թափանցիկ մառախուղի անսահման հեռաւութեան մէջ այդ շղթաները: Մէկիկ մէկիկ ես համարում եմ ինն երկայն, հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-արևելք տարածւող ուղղաձիգ շալքեր և ապա դիտակս կետրոնացնում Միփանի վրայ:

Քննաղ գագաթ, արժանի երկրորդ Մասիս

կոչւելու. լեռների անվերջ շարքերի ետևից նա բարձրացրել է ամբողջապէս ձիւների մէջ թաղւած գլուխը և կարծես մըցում է Մասիսի հետ իր վեհութեամբ:

Հասարակ աչքով, նոյն իսկ առանց դիտակի, տեսնում եմ ես նրա հպարտ բարձրութիւնը, նրա սպիտակ, երկնամերձ ձիւները, նրա գորշկապուտակ վերնակողերը:

+ Այս, դա ամբողջ Հայաստանն է, որ երեսում է Մասիսի գագաթից իր հեռաւոր և մերձաւոր սահմաններով, իր ծովածալ դաշտերով, իր լայն հովիտներով, իր կապուտակ գետերով, լեռների իր այնքան սիրուն շարքով. նրանք այնպէս գեղեցիկ, այնպէս սերտ, այնպէս համերաշխ շըրջանով բոլորւած են ծերուկ նահապետի շուրջը, որ նրանց քակտել ու բաժանել իրարից չէ կարող ոչ մի զօրութիւն: Օ՛, երկրպագում եմ ես ձեզ Մասիսի գագաթից, ով իմ անոյշ հայրենիք, ով դրախտ—երկիր... +

Հրաժեշտի մի վերջին կարօտակէղ հայեացք եմ ձգում ես Մասիսի երկու ուռուցիկ ձիւնափայլ կիսագնդերին, մի այլ ընդհանուր հայեացք հայաշխարհի հրաշագեղ տեսարանին և ընկերներիս հետ՝ նորից թոկի օգնութեամբ՝ գագաթի բարձր կէտից իշնում: Մենք իշնում ենք ուրախ տրամադրութեան տակ, այս վերնապէս հասանք մեր ճանապարհորդութեան նախատակին, իշնում

ենք համեմատաբար շատ աւելի արագ ու հեշտութեամբ, քան բարձրացել էինք։ Ծծմբային թեքւածքից փախչելուց յետոյ՝ մենք նորից մտնում ենք երկիւղալի ժայռերի սահմանը, անցնում ձիւնարանի վտանգաւոր կիրճից և ընկնում մեր նախկին ժայռոտ, ձիւնածածկ, բայց ապահով ճանապարհը։

Երկու ժամից յետոյ, մօտ ժամի 3-ին, մենք հասանք մեր վերին գիշերօթը, իսկ ժամի 6-ին, երբ մութն արդէն սկսում էր ընկնել, մենք հասանք մեր առաջին գիշերօթը և ապա օգտուելով լուսնի լոյսից՝ շարունակեցինք իջնել դէպի Սարդար Բուլաղ, Մասիսի ստորոտը։

## II

1. 1829 թւականի սեպտեմբեր ամսին մի քանի ընկերների հետ միասին գերմանացի պրոֆեսոր Պարրոտը եկաւ Արարատեան դաշտը՝ Մասիս սարի գագաթը բարձրանալու դիտաւորութեամբ։ Նրանք այցելեցին Էջմիածնի վանքը, ուր մնացին երկու օր։ Այստեղ ծանօթացան Խաչատոր Աբովյան անունով մի հայ երիտասարդի հետ և խնդրեցին նրան, որ իբր թարգման ուղեկցէ նրանց՝ Մասիս սարի գագաթը բարձրանալու։ Եւ նա համաձայնեց։

Աբովյանը նկարագրում է այդ ճանապարհորդութիւնը. այդ նկարագրութիւնից քաղում ենք հետևեալը։

Սեպտեմբերի 9-ին մենք ճանապարհ ընկանք դէպի ս. Յակոբայ վանքը, որ գտնում է Մասիս սարի ստորոտում՝ Ակոռի գիւղի մօտ։

Հետևեալ օրը Պարրոտը իր ընկերներից մէկի հետ և մի տեղեակ գիւղացու առաջնորդութեամբ փորձեց բարձրանալ սարը՝ արևելեան կողմից։ Երեք օրւայ ընթացքում հազար ու մի նեղութիւններ կրելուց յետոյ՝ նրանք հազիւ հասան մինչեւ 13,000 ոտնաչափ բարձրութեան. առաջնալ նրանք չկարողացան և կրկին վերադարձան մեղ մօտ. մենք մնացել էինք Ակոռիում։

Սակայն պրոֆեսորը և ընկերները չյուսահատեցին։ Նրանք սկսեցին մանրամասն հարցուփորձ անել այն տեղերին լաւ ծանօթ գիւղացիներին, թէ՝ սարի որ կողմով աւելի հեշտ է գագաթ բարձրանալը։ Նրանք յատուկ դրահամար բերել էին սրածայր գաւազաններ, երկաթեայ կօշիկներ և տաք գգեստ։

Ես ինդրեցի պրոֆեսորին, որ ինձ էլ թոյլ տան հետները սարի գագաթը բարձրանալուն առ տւաւ իր համաձայնութիւնը։

Եւ այսպէս՝ սկսեցինք մեր վերելքը. մեզ առաջնորդում էին Ակոռի գիւղի տէրը, վեց գիւղացիներ և երկու զինւորներ։

Մեպտեմբերի 18-ին մենք սկսեցինք վեր բարձրանալ՝ լեռան արևմտեան կողմով. արահետը ընկնում էր գժւարագնաց առավարների մէջ։ Այդ օրը հազիւ հասանք Քիբ Գեօլ կոչւող տեղից վերև գտնւող մի բլրակի. օրը երեկոյանում էր. այլ ևս առաջ շարժւել անկարելի էր։ Դժնդակ սառնամանիք էր այդտեղ. թէև տաք զգեստներ բաւականաշափ ունէինք, բայց էլի անսանելի տառապանքներ կը եցինք այդ գիշեր։

Հետեւեալ օրը վերցրինք հետներս միմիայն անհրաժեշտ զգեստներ և մի քիչ հաց ու շարունակեցինք մեր վերելքը։ Անմատչելի քարակոյտերից մի կերպ անցնելուց յետոյ՝ հեշտացաւ ճանապարհը։ Բայց՝ ժամի 12-ին, դեռ լե-

ուն կատարը չհասած), մեծ անյաջողութեան հանդիպեցինք։ Եղանակը խառնւեց, մութ ամպեր պատեցին սարը, վչեց կատաղի քամի, օրը սկսեց խաւարել։ Անպատմելի երկիւղ պաշարեց մեզ։ Առաջ գնալ անկարելի էր։ Այդ տեղի բարձրութիւնն էր մօտ 15,000 ոտնաչափ։ Մի փայտէ խաչ անկեցինք այդտեղ և ստիպւած ցած իջանք՝ մեր անձը փրկելու համար։

Սակայն այդ կրկնակի անյաջողութիւնը չյուսահատեցրեց պրոֆեսորին. նա ուզում էր անպատճառ հասնել իր առաջադրած նպատակին, թէկուզ ինքն իրեն վտանգի ենթարկէր։

Մինչդեռ նա այսպէս մտատանջութեան մէջ էր՝ եղանակը աւելի ու աւելի վատանում էր. սկսեց վչել դառնաշունչ քամի. մէգ ու մառախուղ պատից սարի գագաթը։ Սակայն մի մի քանի օրից յետոյ, բարեբախտաբար, եղանակը փոխւեց դէպի լաւը։ Պրոֆեսորը ուզեց օգտւել բարեպատեհ առիթից և մէկ անգամ էլ սկսել վերելքը. Նոյն մտքին եկայ նաև ես. իսկ մնացած գերմանացիները, խրատւած դառն փորձից, չհամաձայնեցին այս անգամ ուղեկցել մեզ։

2. Մենք վարձեցինք գիւղացիներից վեց հոգու, իբրև առաջնորդների, նաև երկու զին-

ւորի ու սեպտեմբերի 27-ին կրկին սկսեցինք մեր վերելը դարձեալ արևմտեան կողմից:

Այս ճանապարհորդութիւնը, այս, շատ քաղցը էր մեզ համար. չէ որ Մասիս սարն էինք ուզում բարձրանալ. բայց մեր հոգին խռովում, յուզում էին հազար ու մի կասկածելի մտքեր. մենք վստահ չէինք, թէ արդեօք ողջ պիտի վերադառնայինք...

Այս բոլոր մտատանջութիւնների մէջ մեզ բաջալերում էր պրոֆեսորը. նա յորդորում էր մեզ՝ սրտապնդւել և յաղթահարել ամեն տեսակ դժւարութիւնների:

Լուսաւորում էր պայծառ, դուրեկան արեգակը. մենք առանց դժւարութեան հասանք այն բլրակը, որի ստորոտում գիշերել էինք առաջին անգամ:

Մօտեցանք ձեան սահմանին. Երեկոյանում էր. եղանակը սաստիկ ցրտեց, թէպէտ փայտ վառեցինք, կրակ արինք,—բայց էլի սառնամանիքն իրենն էր անում: Մի կերպ անցկացրինք գիշերը:

Առաւօտեան դէմ մեր առաջ բացւեց ահագնատեսիլ լեռան դէմքը. բնութիւնը պարզ էր, սքանչելի: Եւ մենք մի արահետով առաջ շարժւեցինք դէպի վեր: Արեգակի լուսասփիւռ ճառագայթները հրազարդում էին շրջակայքը: Մասիս սարը մայրական գթառատութեամբ առել էր մեզ

իր թիկունքի վրայ և բարձրացնում էր սարի գագաթը՝ ամպաչու զարիվերով: Ուրախութիւնից մենք կարծէք թոշում էինք:

Կէսօրին հասանք այն տեղը, ուր կանգնեցրել էինք խաչը: Գիւղացիներից չորս հոգի տեղնուտեղը ընկան և չկարողացան այլ ևս շարժւել—ոչ աջ և ոչ ձախ: Մեզ հետ միասին առաջ գնացողներն էլ պակաս չյոցնեցին՝ անընդհատ կացնահարութիւնից, որով նրանք ջարդոտում էին սառոյցը և ոտք գնելու տեղեր պատրաստում:

Ամեն տեսակ տառապանք կրեցինք մենք. երբ սարի գագաթը մեր աչքին այլևս շատ հեռու չերեաց՝ էլ չնայեցինք նեղութեան,—շտապով առաջ գնացինք՝ ժամ առաջ տեսնելու ցանկացած տեղը, շատերի փափակելին: Մօտ էինք գագաթին. կարծես թե առած դէպի երկինք էինք սլանում. բայց մեր ոտքերը արդէն լքել սկսեցին, ծնկները՝ կթոտել: Միայն բուռն ցանկութիւնը մեզ սախպում էր քայլել առաջ՝ տեսնելու բերկրալին, ամբողջ աշխարհի ծննդատեղին:

Մեր հոգին լցւեց անհուն ուրախութեամբ, երբ սարի գագաթը հասանք: Ծնորհաւորութեան ձախներ լւեցին ամենքիս բերանից: Իմ սիրտը տրոփեց երկիւղած ցնծութեամբ, բոլոր ոսկորներս պարարեցին խնդութեամբ՝ երբ ես համբուրեցի հայրենի լեռան գագաթը: Բուռն խոր-

հրդածութիւններ պաշարեցին միտքս և ներքին յուղումները արտասուքով պատեցին աչքերս...

Անպատմելի ժամեր անցկացրինք այն տեղ: Արկը մօտենում էր մայր մտնելուն. միայն երկու ժամ ցերեկ էր մնացել: Եւ մինչ պրոֆեսորը օդաչափական գործիքով չափում էր լեռան բարձրութիւնը՝ ես ամեն ջանք թափում էի ձեռք բերելու մի որևէ է իր, որ յիշատակի համար պահեմ մօտա. սակայն ձիւնաշեղջ սառուցի ահազին կուտակութիւնից ոչինչ չկարողացայ գտնել:

Երբ մենք ուզում էինք վերադառնալ՝ ես վերցրի ս. Յակոբայ վանքից բերած փոքրիկ խաչը և իմ ձեռքով տնկեցի սարի գագաթին հիւսիսային կողմից: Հետո վերցրի նաև մի փոքր ձիւն, որ թէկ հալեցաւ ճանապարհին, բայց նրա ջուրը մի քանի օրից յիտոյ տարայ հասցրի էջմիածին:

Տխուր հրաժեշտ տւինք Մասիս գագաթին և սկսեցինք մեր վարէջքը: Գիշերը մօտ էր և մենք քանի հեռանում էինք գագաթից, աւելի էլ փղձկասիրտ խանդաղատանքով նայում էինք դէպի վեր... Վերջապէս ցած եկանք և հասանք այն տեղը, ուր մնացել էին մեր ընկերները. ամենքը անսահման ուրախացան:

Մեր այս ճանապարհորդութիւնը, առաւօտւանից սկսած մինչև սարի գագաթ հասնելը, տևեց մօտ 20 ժամ, կէս ժամ մնացինք այն-

տեղ: Լեռան բարձրութիւնը հասնում է մինչև 16,200 ֆրանսիական ոտնաչափի, որ անում է 5 վերստ, Սև ծովի մակերեսոյթից:

\* \*

Այսպէս ահա, ընթերցող, գերմանացի պրոֆեսորի հետ ծանօթացաւ և նրա հետ միասին Մասիս սարը բարձրացաւ Խաչատուր Աբովեանը:

Այդ ծանօթութիւնը նշանակալից հետևանք ունեցաւ հայ կեանքի համար: Պարզութը գնահատեց Աբովեանի եռանդը, աշխատասիրութիւնը և միջնորդելով հնարաւորութիւն տւաւ նրան շարունակելու իր ուսումը գերմանական համալսարանում:

Հայրենիք վերադարձաւ Աբովեանը և անգնահատելի ծառայութիւն մատուցեց իր ազգին: Նա գրեց «Վէրք Հայաստանի» յայտնի գլուխքը և հիմք դրեց ոռուսահայոց գրականութեան:

Ո՞վ չէ լսել Աբովեանի անունը:

սաւանով, որի միջից երբեմն-երբեմն դուրս են ցայտում հատիկ-հատիկ մշտականաչ եղևնիները և դարձեալ անհետանում։ Ապառաժներն անընդհատ միմեանց են յաջորդում։ Նրանք բազմաթիւ և բազմածե ծալքերով ձգւում են անդիտային մոայլ ձորի միջով և միախառնուում անթափանց թանձր կապուտակի հետ, ուր վարագուրած է գարնան քնքուշ երկնակամարը։ Ամեն տեղ տիրում է խլացուցիչ աղմուկ, որ յարմար կերպով ներդաշնակւում է վայրենի բնութեանը։ Այս աղմուկը, գոռում-գոչումը կատաղի թերէքին է պատկանում։ Դա գլխիվայր վազելովքարքարոտ յատակի վրայից և ամեն ինչքարուքանդ անելով, անխնայ շպրտում է այս ու այն կողմ ժայռերի միջից պոկած ահազին բեկորները։ Դա նման չէ սովորական արագահոս գետերին։ Պա կատաղի է և իր կատաղութիւնը հասցըել է գագաթնակէտին։ Կորցըել է իր գոյնը, կորցըել է բոլորովին իրան։ Հազարաւոր պտոյտներ անելով, քարի է զարկւում, ամեն ինչ գջլում, արմատախիլ անում, ջարդում ու փշում։ Երջապատում է կղզիացած ամրապինդ ժայռերին և անէծք ու սպառնալիք ուղղում՝ «չնչին արարած, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը անշուշտ կը պոկեմ տեղիցդ, կըզարկեմ ափիդ և փշրելով կը ոչնչացնեմ քո գոյութիւնը»։ Եռում է ամբողջապէս, բլուրներ ու անդունդներ կազմում, նո-

## ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃԸ

*1883 թւականի ապրիլ ամսի 22 էր։ Վլադիկաւկազից դուրս գալով, մի քանի ժամից յետոյ արդէն գտնւում եմ Դարիալի կիրճի մէջ։ Օդը մուայլ է, խոնաւ և ցուրտ։ Աջ կողմս ապառաժներ, ձախ կողմս ապառաժներ, վերջապէս բոլոր շուրջու ապառաժներ, որոնցից մէկի ստորոտով գնում եմ և շարունակ նայում վեր, բարձր, որտեղից կիսաքանդ կամարների ձեռվ գլխիվայր կախւել են ահազին ժայռեր։ Նրանք նայում են ցած և սարսափ ներշնչում ինձ։ Եթէ մի կտոր, թէկուզ մի չնչին մասը պոկւի իր տեղից՝ ինձ սայլակիս հետ միասին փոշու հետ կը հաւասարեցնի։ Բնութիւնը մտադիր չի եղել այստեղ ճանապարհ բանալու, բայց յանդուդն մարդը ինչեր չի արել։*

*Ընթանում եմ դէպի առաջ և բարձր, Մեր ուղին սկսւում է ժայռերի սառին փէշերից և ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում դրանց կրծքի վրայով ու դիմում ձիւնապատ գագաթների կողմը, որոնք այս միջոցին ծածկւել են սպիտակ և մոխրագոյն ամպերով, այն երկնային*

ըից շուռ է գալիս և ջնջումու իր հետ տանում։ Այստեղ ծափ է տալիս, այստեղ ապտակում, ծեծում, երրորդ տեղ խփում գլուխը գետնին և մի ակնթարթում թոչկոտում բարձր, շատ բարձր՝ թուքեր արձակելով ամեն կողմէ նա անգութ է, գոռոզ և հպարտ։ Չի ուզում ջրինմանւել, ամբողջապէս փրփուրի է փոխել։ Մանրու խոշոր սիրուն առակներ ամեն մի քայլափոխում ծնունդ են առնում ժայռերի կըծքի միջից, կարկաչելով, ուրախուրախ վազում են ներքեւ, ձորի մէջ կատարւող աղմկալից տեսարանը տեսնելու, բայց անողորմ հրէշը կլանում, խեղամահ է անում այդ ծաղկահասակ անմեղ արարածներին։

Ընթանում եմ դարձեալ դէպի առաջ և բարձր։ Ճանապարհը իր անթիւ պտոյտներով դիմում է գագաթների կողմը։ Նա ոլորելով՝ ապառաժների վրայ աստիճանաբար նւազում է, իսկ բարձր ամպերի մօտ մոխրագոյն թելի է նմանում և վերջապէս անյայտանում։ Ճանապարհի վրայ, մի քանի հեռու տեղեր շարժական կէտեր են նշմարւում։ Նրանք անշուշտ մարդիկ՝ վեռնըցիք են իրանց բեռնակիր սայլակներով, կամ հարուստ քաղաքացիք՝ շքեղ կառքերի մէջ քաղմած։

«Ահա որտեղ է երեսում մարդու ոչնչու-

թիւնը բնութեան դէմ», ակամայ անցնում է մտքովս։ Այս տեսարանը յիշեցնում է ինձ շատ անգամ տեսածս մրջիւնների արշաւանքը՝ դարեւոր կաղնիների և ընկուզենիների վրայ։ Մասբերում եմ այս միջոցին մարդկային հանճարի գանազան վսեմ արտադրութիւնները՝ կոթողներ, տաճարներ, ամրոցներ, մտքով տեղափոխում եմ նրանց այստեղ, համեմատում բնութեան այս ահարկու ստեղծագործութիւնների հետ և հիասթափում։ Ահա նշմարւում են հեռաւորութեան մէջ սպիտակ բծեր, որոնք կամաց-կամաց աճում են։ Փոքր առ փոքր մօտենում ենք նրանց, դա «կազբէկ» կայարանն է։

Անցնում է բսան ըոպէ, ես դարձեալ շարունակում եմ ճանապարհս։ Ժամը երկուսն է։ Զարագուժ սկ-սկ ամպերն իրանց դաժան դէմքերով անշտապ սողում են երկնքի վրայով և շփւելով բուսագուրկ լեռներին՝ տալիս-անցնում են։ Կապուտակ երկինքն ամբողջապէս քողարկւած է, միայն երբեմն-երբեմն դուրս են ցայտում արեգակի նւազ ճառագայթները, ըոպէապէս շամանդաղ են տարածում ձորի այս ու այն տեղի վրայ և արագութեամբ իսկոյն չքանում։ — Փոթորիկ է լինում, հարցնում եմ ձիավարին։

—Այս, պատասխանում է անհանգստութեամբ ու թափ տալիս գլուխը:

Ամպերը հետզհետէ թանձրանում, իջնում են աստիճանաբար դէպի երկիր, ձորը լցւում է աղջամուղջով. խաւարում է ամեն ինչ, և օդի մէջ տիրում է մի առանձին հռտ, որ յիշեցնում է ծովային խոնաւութիւն։ Բարձրից նայում եմ ցածր, դէպի անդունդ, ուր Թերէքը շարունակ ընթանում է, իր գոռում-գոչիւնը այս անգամ սիրտ ճնշող ողբի է նմանում, որով կարծես ընութեան խոռվութիւնն ու արհաւիրքն է գուշակում։ Լեռնցիները սայլերը կանգնեցրել են ճանապարհի մի ապահով անկիւնում, նեցուկներ են տւել անիւներին և պատրաստում են սայլի տակը մտնելու։ Ստէպ-ստէպ սլանում են մօտովս վախեցած թոշունները և շտապում իրանց բները։

Իմ սայլակի ձիավարը մերթ խրախուսում է իր ձիերին, մերթ սպառնում, ստիպում է ամեն կերպ իրանց քայլերը արագացնել։ Խելացի անասունները կարծես նոյնպէս զգում են անխուսափելի վտանգը։ Նրանք ամենայն հաւատարմութեամբ աշխատում են, ճիգ են թափում շուտով տեղ հասնելու, բայց այս անողորմ զառիվայրը ուժասպառ է անում նրանց։

Յանկարծ հրեղէն վայլը մի ակնթարթում փռուում է ընութեան մէջ ու հանգչում։ Նրան

յաջորդում է մի խուլ ու հեռաւոր որոտումն և դարձեալ լոռում է ամեն ինչ։ Միմիայն ներքե, ձորի մէջ, Թերէքը շարունակում է իր ողբը։ Դա այլևս կատաղի գազան չէ. այժմ արտասւալից աղաղակներ է արձակում։ Փայլակը նորից գուրս է պըճնում ամպերի միջից, մի քանի կրակոտ ցնցումներ է գործում ու դարձեալ տեղի տալիս խաւարին. դրան հետեւում է որոտումն, և անձրւե խոշոր կաթիլները ուժգին զարկուում են գետնին, որի վրայ դրոշմում են սկ կէտեր։

Ահոելի ժայռեր, անդնդային ձոր, անողորմ ամպեր, տարօրինակ խաւար՝ այս բոլորը կարծես դաշն են կապել իրար հետ խաղ խաղալու, բոլորովին չնկատելով իրանց գրկում սրտնեղւած կենդանի արարածների գոյութիւնը։ Նորից հրեղէն շանթեր, նորից սարսափելի ճայթումն։ Դորիում է երկիրն ու արձագանգը միքանի անզամ կը կնւում է խառնաշփոթ ձորերի մէջ։ Անձրւեն սկսում է առատութեամբ թափւել լեռնային յատուկ շխչնոցով և միախառնուում է արդէն ձորի խորքերում անհետացած Թերէքի ձայնին։ Այս վայլենի համերգը շարունակուում է։ Երբեմն ընդհատուում է ամպերի որոտումից, երբեմն խանգարուում ձիավարի անբաւական ձայնից, բայց դարձեալ շարունակուում։ —Զէ որ առաջարկեցին մեզ մի-երկու ժամ

սպասել կայարանում, նկտուց ինձ ձիավարը.  
Երկի ձեզ հաճելի է այսպիսի բանը:

—Դու հանգիստ կաց, ինչ լինելու է՝ թաղ  
լինի, ես չեմ վախենում:

—Երկում է, որ դեռ ևս չէք տեսել այս-  
տեղի «զաւալները»... «Նուռու, Վասկա», ձայ-  
նեց զգուշութեամբ մտրակելով ձիուն:

Ես նստած եմ սայլակի մէջ անշարժ, կռա-  
ցած և աչքերս կիսաբաց, որովհետև անձրկի  
ուժեղ շիթերը թեք ուղղութեամբ ուղղակի ե-  
րեսիս են զարկւում: Աչք եմ դարձնում աչ  
կողմ և տեսնում, որ ժայռի միջից ամեն մի  
քայլափոխում քարեր են պոկւում ու գլորւում  
ցածր, բայց բարեբախտաբար ոչ շատ խոշոր:  
Փայլակ, կայծակ, որոտումն անդադար յաջոր-  
դում են միմեանց և կարծես սպառնում են  
կործանել աշխարհը և երկինք ու երկիր ի-  
րար խառնել:

---

Ճանապարհը շարունակ բարձրանում է:  
Անձրկի կաթիներն զգալի կերպով մանրանում  
են ու բազմանում: Ես փոքր առ փոքր ընկղմ-  
ուում եմ թուխ գոլորշու մէջ, որ աստիճանա-  
բար թանձրանում է: Դարձեալ քառորդ ժամ  
և ես պատած եմ կատարեալ խաւարով. բայց  
սա գիշերային խաւար չէ, այլ լեռնային մի-  
մոմենտ, որն անկարող եմ համեմատել մի-  
այլ բանի հետ՝ միտքս պարզելու, ցանկացածս



Գորդիական կերպով

արտայայտելու համար... Յանկարծ ցնցւում է մեր սայլակն ու կանգ առնում:

— Խուլ ես, որ չես լսում «քաշւիր» բառը. այ, քո... աւելացրեց ձիավարը, մտրակի հարւած հասցնելով մէկին: Նա էլ փոխադարձ միքանի յիշոցներ ուղղեց սրա հասցէին օսերէն, միևնոյն ժամանակ աշխատելով ազատել իր երկանիւ սայլը: Անցնում է դարձեալ քառորդ ժամ, և այլս անձրեկի նշոյլն անգամ չի նկատւում. բայց զգում եմ, թէ ինչպէս կրկին թրջում եմ: Օդը ցուրտ է և վերին աստիճանի խոնաւ: Հագուստս սաստիկ ծանրացել է. ուսերս, մէջքս ցաւում են:

Խաւարն անհետացել է: Արեկի մեղմ ճառագայթները թափանցում են նօսր մառախուղի միջով ու ախորժելի ջերմութիւն պարզեւում բնութեան: Ահա լեռների գագաթները. ահա նորից հսկայական ապառաժները. որքան արցունքներ են թափում նրանք, բայց այդ ուրախութեան արցունքներ են: Բնութիւնն սկսում է ժպտալ: Թերէքն անգամ, որ անյայտացել է անտառների մէջ, այս միջոցին պարելով ու ծիծաղելով է մեզ յիշեցնում իր գոյութիւնը: Ահա երևում են լեռների գագաթներին կպածինչոր կէտեր, որոնք նման են ծիծեռնակների բներին. այնտեղ անշուշտ մարդիկ են ապրում:

Թռչունները ուրախ-ուրախ սլանում են մաքուր օդի մէջ՝ զանազան ուղղութեամբ: Զիերը նոյնպէս աշխոյժ ու զւարթութիւն են ստացել: Ճանապարհի վրայ անձրեկից գոյացած ջրերը պլալում են արեկի ճառագայթների տակ: Ո՞րքան դուրեկան է շունչ առնել այս մաքուր օդի մէջ, որքան ախորժելի է այս ըոպէն: Այլս չեմ ցանկանում ետ նայել, ուր անդունդների մէջ դարձեալ շարունակւում է հոգեմաշտեսարանը: Մօտեցել ենք Կօքի կայարանին. գա հեռւից փայլում է սպիտակ գոյներով:

Ո՞րքան ուրախ եմ, որ շուտով հանգիստ եմ առնելու այնտեղ:

### ԴիՊԻ ԿԱԶԲԵԿԻ ԳԱԳԱԹԸ

Ահա թէ ինչպէս է նկարագրում մի ոռւս ճանապարհորդ իր վերելքը դէպի Կազբեկի դագաթը:

«Եղանակը պարզ և խաղաղ էր. սառցաշաշտերը հալւում էին: Ճանապարհին բազմաթիւ ճեղքւացքների էինք հանդիպում. վոքրերի վրայից ցատկելով էինք անցնում, իսկ մեծերին հանդիպելիս նրանց շուրջը պտոյտներ էինք անում:

Ցետոյ ճանապարհներս փոխեցինք և սկսե-

Կաղընկ



«Երբ ես զար-  
թեցի — պատ-  
մում է նոյն  
ճանապարհոր-  
դը — մատա-  
խուղն արդէն  
ցըւել էր, եր-  
կինքը պարզ  
կապոյտ էր,  
մինչև անգամ  
սկին էր տալիս  
և զարդարւած  
էր բազմաթիւ  
աստղերով:  
Կաղընկի յե-  
տեից կամաց-  
կամաց գուրս  
էր գալիս լուս  
սինը: Յուրա  
էր. սկսեցինք  
հրապարակի  
վաղպարակի  
վրայ վազվազել  
մի փոքր տա-  
քանակ մաս-  
մար, տաքանա-  
կուց յետոյ վճ-  
ռեցինք նորից

ցինք գագաթից գլորւած ձիւնակոյտի վրայով  
անցնել: Այդ միջոցին, յանկարծ, ձիւնը ոտքիս  
տակ փլւեց և ես անշուշտ սարի ճեղքւացքը կը  
գլորէի, եթէ ձեռքիս ձողը ինձ չօգնէր: Երե-  
կոյեան ժամի վեցին մենք կանգ առանք մի  
ժայռի տակ գիշերելու համար: Առաւօտը ցուրտ  
էր. այդտեղ թողինք մեր եափնջիները ու պա-  
շարի մի մասը և սկսեցինք շարունակել մեր  
վերելքը:

Շուտով հանդիպեցինք մի սառցակոյտի և  
սկսեցինք նրա վրայ 200 աստիճանի սանդուղք  
շինել ու բարձրանալ: Յետոյ նորից հանդիպե-  
ցինք մի ուրիշ սառցակոյտի, նրա վրայ էլ 116  
աստիճան կըտրելով շարունակեցինք ճանապար-  
հներս: Այնուհետև մեր ճանապարհը ժայռերի  
վրայով էր ընթանում: Առաւօտեան ժամի 10-ին  
նախաճաշիկ արինք և այնուհետև սկսեցինք  
շարունակել մեր ճանապարհը: Հարիւր սաժէն  
անցնելուց յետոյ կողակներից մէկի սիրտն ըս-  
կեց խառնել, գլուխը պտտւել: Ստիպւած եղայ  
նրան թողնել այդտեղ:

Ժայռերի վրայով բարձրանալով՝ գուրս ե-  
կանք մի ձիւնաղաշտ, որի մակերեսոյթը արե-  
գակի տաքութիւնից քրտնած էր: Այդտեղ մեզ  
շուտով պատում է թանձր մառախուղը: այլևս  
անկարող լինելով շարունակել ճանապարհը՝ մը-  
նում ենք այդտեղ գիշերելու:

Քնել: Ընկերներս առաջարկեցին, որ մենք մէջ տեղը հերթով քննենք։ Մեզանից ով մէջ տեղն էր պառկում, իսկոյն քունը կոխում էր նրան, որովհետև մէջտեղ պառկողի համար տաք էր լինում, իսկ կողքերում պառկողները, ցրտին երկար չը դիմանալով, վեր էին թոշում և սկսում էին վազվել. մէջտեղ պառկողն էլ մենակ ֆալով, սկսում էր մըսել, ստիպուած էր լինում վեր թոշել տեղից։ Առաւօտեան 10 աստիճան ցուրտ էր. մեր հագի շորերը ծածկուել էին եղեամով, իսկ մարմի անդամները բոլորովին փետացել էին ցրտից։

Արեգակի տակ մի փոքր տաքանալուց յետոյ ճանապարհորդներն սկսում են բարձրանալ մի ուղղահայեաց ժայռի վրայ։ Այդ տեղ էլ երկրորդ կողակի գլուխն սկսում է պատուել և նա տենդով է բռնւում, իսկ ուղեկցող օսի քթից սկսում է արիւն հոսել, բայց աջողւում է ձիւնով արիւնը կտրել և լինքն էլ ծարաւից սկսում է սաստիկ տանջւել։ Երկրորդ կողակն այլիս չի կարողանում շարունակել վերելքը. նրան թողնում են այդտեղ, իսկ ինքը քաջ ճանապարհորդը, օսի հետ միասին, շարունակում է ճանապարհը։

Կէս օրին նրանք դուրս են գալիս մի լայն հրապարակ, որտեղից նրանց առաջ բացւում է մի հրաշալի տեսարան։ «Այստեղ, շարունակում է

պատմել նա, մեռելային խաղաղութիւն էր տիրում. կենդանի արարածի նշոյլ անգամ չը կար։ Մեր առաջից յանկարծ մի կարմիր թիթեռ անցաւ. մենք մացինք ապշած, տեսածներիս չէինք հաւատում. բայց մի հինգ ըռպէից յետոյ դարձեալ մեզ պատահեցին երկու այդպիսի թիթեռներ։

Ժամի մէկ և կէսին արդէն սարի գագաթի տակում էինք։ Օսն այլև չէր ուզում ինձ հետեւել, առարկելով թէ այդպիսի պարսպի վրայ բարձրանալն անհնար է։ Ես խորհուրդ տւի նրան այդտեղ ինձ սպասել, իսկ ես շարունակեցի ճանապարհս, կտրելով սարի վրայ աստիճաններ։ Հազիւ թէ 10 աստիճան բարձրացած լինէի, մէկ էլ տեսնեմ որ օսն ինձ հետեւում է։ Ճանապարհս ծածկուած էր սառած ձիւնով. այդ տեղը անցնելուց յետոյ սկսեցինք ժայռի վրայ բարձրանալ։ Վերջապէս ճիշտ ժամի չորսին, յուլիսի 29-ին 1889 թ. հասանք սարի ամենաբարձր կէտին։ Այդ տեղ տնկեցինք չորս արշին երկարութեամբ մի կարմիր դրօշակ։

Սարի գագաթից բացւեց մի հրաշալի տեսարան. երկար ժամանակ այդտեղ կանգնած հիանում էինք սքանչելի տեսարանով։

Ժամի չորս և կէսին սկսեցինք վայր իջնել, իսկ եօթ և կէսին հասանք մեր առաջին գիշերած տեղը։

## ԴԵՊԻ ՄՈՆԲԼԱՆ ՍԱՐԻ ԳԱԳԱԹԸ

1865 թւականի յուլիս ամիսն էր։ Մի քանի անգլիացիներ որոշեցին միասին բարձրանալ Մոնթան սարի գագաթը։

Մոնթանը Ալպեան լեռների ամենաբարձր գագաթն է (Շւեյշարիայում)։ Նրա բարձրութիւնն է մօտ 4 վերստ։

«Վերոյիշեալների հետ միասին Մոնթան սարի գագաթը բարձրանալ որոշեցի նաև ես, — պատմում է վիսլէր անունավ մի անգլիացի։ մեզ ուղեկցում էին երեք փորձւած առաջնորդներ։

Մենք լցրինք մեր տոպրակները զանազան ուտելիքներով, վերցրինք սպիրտ, գինի, մի տոպրակ ածուխ և տաշեղ, առանք ալպեան կոչւող ձեռնափայտեր՝ երկաթեայ սուր ծայրերով՝ որ գործ են ածում սովորաբար սար բարձրացողները։

Առաւտեան վաղ, ժամը 5-ին, մենք ճանապարհ ընկանք, — պատմում է վիմպէրը. բայց առաջին օրը, լսելով մեր առաջնորդների խորհրդին, մնացինք հանգստանալու երեք վերստ բարձրութեան վրայ, — թէպէտ այնտեղ հասնելիս դեռ օրը լրյու էր։

Մենք պատրաստեցինք թէյ. ճանապարհը շարունակելուց առաջ թէյ խմեցինք և մի լաւ նախաճաշ արինք, — գիտէինք արդէն, որ սարի գագաթում մարդ բան ուտելու ամենելին ցանկութիւն չի ունենում։

Մինչդեռ մենք հանգստանում էինք, մեր առաջ բացւեց մի այնպիսի տեսարան, որ միմիայն սարերում եղած մարդը կարող է իմանալ։ Հեռու, ներքեռում, մեր ոտների տակ, տարածւել էին խիտ ամպեր. կայծակը կտրում-անցնում և լուսաւորում էր սպիտակ մառախուղը, որ ներքեւ փռւելով, մեր տեսողութիւնից ծածկում էր հովիտը և սարի ստորոտը։

Յանկարծ ներքեռում լսեց որոտ, որ տարածւեց լեռան չորս կողմը. ապա մեզնից ներքեւ կանց տեղալ մաքուր, խոշոր կաթիլներով անձրւել... իսկ այդ միջոցին մենք նստած էինք վերը, մի տափարակ ժայռի վրայ, որտեղ չկար ոչ ամպ և ոչ էլ անձրւ։ մեզ լուսաւորում էր պայծառ արեր։ Երկար մնացինք մենք այդտեղ և սքանչացանք ցածրում մռնչացող որոտով. աշքներս հեռացնել իսկ չէինք ուզում այդ հոյակապ տեսարանից։

Մինչև այդ տեղը հասնելը մենք բայլում էինք սարաժայուրի վրայով, անդադար վորխում էինք մեր ճանապարհը, — մէկ այս և մէկ այն կողմը։ Սահուն սառոյցը ծածկում էր այն սա-

րալանջը, որ մեր առջեն էր գտնւում. և մենք ստիպւած էինք ուրիշ կողմ երթալ՝ աւելի յարմար ուղի որոնելու համար:

Վերջապէս, սարի չորս կողմը պատելուց յետոյ, մենք սկսեցինք վեր բարձրանալ ձեան վրայ տարածւող արահետով. սրա վրայ տեղ-տեղ բարձրանում էին սրածայր բլրակներ՝ սառոյցով ծածկւած Այժմ ստիպւած էինք սենք ոչ թէ քայլելով, այլ սողալով վեր բարձրանալ,—մէկ ոտքը այս, միւս ոտքը այն կողմը դցած: Աշխատում էինք աջ կամ ձախ չնայել, այլ միայն առաջ. երբեմն մէկ կամ երկու կողմից խորը տարածւում էին մթին, անյատակ անդունդներ:

Վերջապէս հասանք մի այնպիսի տեղ, ուր լեռները բաժանւում էին իրարից շատ խոր վիճերով, որից անցնել հնարաւոր էր միայն՝ փըսրուն ձեան միջով կամ սառցի շերտերի վրայով. այդ սառցաշերտերը, ինչպէս մի-մի փոքրիկ կամուրջ, իրար հետ կապում էին երկու հանդիպակաց սարեր: Այդ սառցակամուրջներով անցնելը շատ վտանգաւոր էր, դրա համար էլ մենք ամենքս իրար հետ կապում էինք, մի քանի արշին տարածութեան վրայ, հաստ պարանով. այդ անում էինք՝ եթէ բան է, առջեկց գնացող ընկերը ներքև գլորւի, յետեւում գտնւողները կարողանային գետնին ամուր յենւել և նրան վեր քաշել:


Յերեկւայ ժամի երկուսն էր, երբ հասանք Մոնթանի գագաթը: Ճանապարհորդութիւնը, քանի վեր էինք բարձրանում, աւելի ու աւելի վտանգաւոր և յոգնեցուցիչ էր դառնում. աչքներս սկսեցին ցաւել ձեան անտանելի փայլից: Արեգակի պայծառ ճառագայթների տակ փայլող ձեան սպիտակ սաւանով ծածկւած էին սարերը. իսկ սարերից վեր տարածւում էր անսովոր պայծառ, մուգ-կապտաւուն երկինքը:

Շունչը քաշելը աւելի ու աւելի դժւարացաւ. եղած օդը բաւական չէր թոքերի շնչառութեան համար, և քանի վեր էինք բարձրանում, այնքան էլ աւելի էր պակասում օդը: Մարզուշունչը կարւում էր, արիւնը երակների մէջ արագ բարախում: Կարծէք տենդի մէջ լինէինք, ամենքս ծարաւ էինք, ջուր էինք ուզում. իսկ ուտելու մասին ոչ ոքի մտքովն էլ չէր անցնում: Բայց ջուր խմելու համար պէտք էր կրակ անել և ձիւն հալցնել: Սակայն փորձը ցոյց տւեց, որ այդ այնքան էլ հեշտ բան չէր,—տաշեղները և ածուխը չէին վառում. կամ, եթէ վառում էին էլ, իսկոյն և եթ հանգչում էին,—այնչափ սակաւ էր օդը: Կարծէք այդքանը բիչ էր. դրան էլ աւելացաւ այն, որ մեր երեսները սկսեցին ուռչել և արիւնով լցւել:

Զնայելով այս դրութեան՝ մենք որոշեցինք սարի գագաթին ֆնալ որչափ կարելի է աւելի

Երկար ժամանակ. չէինք ուղում, որ զուր տեղը  
կորչէր աշխատանքը. մեր նպատակն էր՝ որչափ  
կարելի էր՝ ուսումնասիրել լեռների բնութիւնը,  
օդը և բոլոր շրջապատը:

Դեռ ճանապարհ ընկնելուց առաջ մենք  
խոստացել էինք մեզ ճանապարհ գցող մեր ազ-



Մոնթւան

գականներին և ծանօթներին, թէ որևէ նշանով  
իմաց կտանք նրանց՝ սարի գագաթը յաջողու-  
թեամբ հասնելուց յետոյ. Այդ պատճառով էլ  
փորձեցինք արձակել յատուկ այդ նպատակով  
վերցրած ատրճանակը, բայց նա շատ խուլ ձայն  
հանեց, առանց արձագանք տալու:

Երբ մենք արդէն մի քանի գիտական դի-  
տողութիւններ էինք արել վերջացրել, երբ բա-  
ւարար չափով հիացել էինք լեռներից բացւող  
չքնաղ տեսարանով և անսովոր կապոյտ երկըն-  
քով, —որ լեռների սպիտակ սաւանի դիմաց այդ-  
տեղ առանձին գեղեցկութեամբ է ներկայանում—  
ստիպւած էինք արդէն վերադարձ սկսել. դժւար  
էր երկար մաս այնտեղ. մէկ էլ՝ վտանգաւոր  
էր ուշ վերադարձնալը:

Վերադարձը սկսելուց առաջ մենք, բոլոր  
ճանապարհորդների օրինակին հետևելով, մի  
դատարկ շշի մէջ դրինք թղթի կտոր, որի մէջ  
նշանակեցինք այն թւականը և օրը, երբ մենք  
սարը բարձրացանք. շիշը պահեցինք մի սառ-  
ցասարի տակ, յարմարաւոր տեղ:

Վարէջքը նմանապէս ունէր իր գժւարու-  
թիւնները և վտանգները, ինչպէս և՝ վերելքը:  
Մենք պէտք է իշնէինք ուղղաձիգ ժայռերով,  
որոնք այնչափ սահուն էին, որ ոտքը վրան  
դնել չէր լինում: Եթէ այդպիսի մի ժայռ չէր  
տանում դէպի անդունդ կամ ձեղքւածք, այդ  
դէպքում մենք սահում էինք, — ինչպէս որ  
երեխանները փոթքիկ սահնակի վրայ նստած  
սահում են ձմեռը բլլից դէպի ցած:

Յանկարծ մեր ոտքի տակ երեաց սպիտակ  
ամպ, ապա սկսեց մազել անձրև: Մեր փորձւած  
առաջնորդները շտապեցնում էին ամենքիս, որ

արագ- արագ ցած իջնենք. բայց շնորհիւ այն  
բանի, որ ամեն ըռպէ վտանգը անպակաս էր  
մեր առջնից, մենք շարժւում էինք շատ դան-  
դաղ. Վերջապէս, որովհետև արդէն ուշ էր օրը  
և տեղացող ձիւնն էլ փակում էր մեր ճանա-  
պարհը, որոշեցինք կանգ առնել սարի մօտակայ  
խոռոչներից մէկում և գիշերել այնտեղ:

Հետեւեալ օրը առաւոտեան մենք կրկին ճա-  
նապարհ ընկանք. արեգակի պայծառ ճառա-  
գայթները լուսաւորում էին չորս կողմը: Այն  
բոլորը, ինչ մեզ անհրաժեշտ չէր, հենց այն-  
տեղ դէն գցեցինք, չուզեցինք մեր սեփական  
ծանրութիւնը էլ աւելացնել: Վերցրինք միայն  
մեր ալպեան սրածայր փայտերը: Տեսանք, որ  
էլի կարիք կայ իրար հետ հաստ և երկայն պա-  
րանով կապւելու, այդ էլ արինք. և մենք գնում  
էինք իրար յետեկց շարքով:

Ճանապարհը թէև այժմ այնչափ էլ դժւա-  
րին չէր, որչափ առաջ, բայց նրանից ա-  
ւելի վտանգաւոր էր. ճեղքւածքները ձիւննի  
էին ծածկւած: Հեշտութեամբ կարելի էր, վտանգը  
չնախատեսնելով, մի քանի տասնեակ սաժէն խո-  
րութիւն ունեցող անդունդ գլորւել:

Վարէջքի հենց սկզբում, երբ առաջընթաց  
ուղեցոյցը և մի անգիտացի սկսեցին ցած իջնել  
սահուն, ուղղաձիգ սարից, ձեան մի ահագին  
կտոր պոկ եկաւ. մի ակնթարթում նրա վրայ

կանգնած չորս ճանապարհորդները ցած թռան  
դէպի անդունդ: Նրանց յետեւում գտնւողն էլ  
չկարողացաւ ինքն իրեն պահել և օդի մէջ կախ-  
ւեց, Ես և միւս առաջնորդը. անմիջապէս յետ  
նետւեցինք, բայց այդ վայրկեանին պարանը  
կտրւեց, և մեր ընկերներից չորսը դէպի ներքեւ,  
ահազարգանդ վիճը գլորւեցին, որի կողերից  
գուրս էին ցցւած սառցաժայուերի սուր ծայ-  
րերը...

Երկու-երեք վայրկեան մենք ականատես  
եղանք, թէ ինչպէս մեր անբախտ ընկերները  
թևատարած գլորւում և անհետանում էին մեր  
աչքից, մի անդունդից միւս անդունդը թաւալ-  
ւելով...

Սարսափից մենք քար էինք կտրել և կէս  
ժամ շարունակ մեր ուշքը վրաներս չէր գալիս:  
Յետոյ միայն, երբ ես նայեցի պարանին,  
տեսայ, որ նա աննկատելի կերպով մաշւել էր՝  
ժայռերի սուր ցցւածքներին քսւելով:

Ուշքի գալով մենք փորձեցինք վար իջնել՝  
մեր դժբախտ ընկերների հետքը գտնելու հա-  
մար. բայց մեր որոնումները արդիւնք չունեցան.  
գլխիկոր, մենակ, ցած իջնանք Մոնթանից հովհա-  
տիւն:

Տեղ համսելուց յետոյ՝ մօտակայ գիւղի  
բնակիչները մի քանի փորձւած առաջնորդների  
ուղարկեցին որոնելու կորած ճանապարհորդ-  
ներին: Նրանք վերադարձան և պատմեցին, որ

տեսել են նրանց, բայց չեն կարողացել դուրս հանել։ Այն ժամանակ մի քանի որսորդ գնացին այն վայրը, որտեղ անբախտ ճանապարհորդները իրենց վաղաժամ գերեզմանն էին գտել։ Պարանով ցած իջան նրանք, գտան սպանւածներից երեք հոգու պառկած միևնոյն շարքով, ինչպէս որ նրանք իջնելիս էին եղել. իսկ չորրորդին անկարելի եղաւ գտնել. — նա, երեկի, վայր գըլորելիս կպել մնացել էր մի ժայռի և ձեան տակով եղել...

\* \* \*

◇ Շատ բարձր սարեր կան երկրիս վրայ, կան այնպիսիներն էլ, որոնց վրայ դեռ մարդու ոտք չէ կպել։ Ի հարկէ հեշտ չէ բարձր, ձիւնապատ լեռների գագաթը բարձրանալ. վտանգը անպակաս է այնտեղ բարձրացողների համար, ոմանք էլ նոյնիսկ մահ են գտնում այնտեղ.

Բայց մարդ արարածի հետաքրքրութիւնը մեծ է, նա ուզում է ամեն բան իմանալ, ամեն աեղ լինել։ Շատ գիտնականներ անսաելի դժւարութիւններ յաղթելով կարողացել են հասնել բարձր սարերի կատարները. նրանք ուսումնասիրել են այնտեղի բնութիւնը, օդը շրջապատը։ Այդպիսի անձնազոհ մարդկանց ենք պարտական այժմ գիտութիւնից շատ բան. նրանք մեր ամենքի ուսուցիչներն են։

## ԶԵԱՆ ՀԻՒՍԵՐ

Մի անգամ Շւէյցարիայում այսպիսի դէպք պատահեց։

Հովտի մէջ, Ալպեան լեռան ստորոտում, գտնւումէր Ռիուեռաս կոչւող սիրուն, փոքրիկ գիւղը։ Այս գիւղի ծայրում կար մի տուն, որտեղ ապրում էր գիւղացի հանզը իր ջահել կոոջ և փոքրիկ տղայի հետ միասին։

Մի անգամ Հանզը ուզեց անտառ գնալ փայտ կտրելու։ Երեկոյեան, կոոջը մնաս բարով ասելուց յետոյ, նա ճանապարհ ընկաւ։ Բայց հազիւ թէ կէս վերստ անցած լինէր նա, երբ լսեց մի սոսկալի աղմուկ, որ վալիս էր յետևի կողմից։ Գիլիխն վայտալովնա ետ վազեց եկած ճանապարհով, ոչ մի կերպ չկարողացաւ հասկանալ, թէ ինչ էր պատահել։ Այդ միջոցին երկնքի վրայ՝ ամպերի միջով՝ դուրս նայեց լուսինը. փոխանակ գիւղական տների՝ լուսնի լուսով երևացին ինչոր ձիւնեղէն բլուրներ։

Ի՞նչ էր պատահել ուրեմն. — ձեան հիւսեր էին թափւել սարից և տակով արել գիւղի բոոր տները։

Հանզը շտապով սկսեց որոնել իր խրճիթը գիւղի ծայրում, բայց նրա հետքն անգամ չկար։ Մարսափահար եղած՝ նա վազեց դէպի մօտա-

կայ գիւղը՝ օգնութեան կանչելու մարդկանց։  
Առաւոտեան դէմ հարեան գիւղացիները  
թիակներ առած շտապով հաւաքւեցին ձեան հիւ-  
սերի տակ մնացած գիւղը։ Նրանք իսկոյն սկսե-  
ցին փորել ձիւնը՝ տակը մնացած մարդկանց հա-  
նելու համար։

Բայց խեղճերը լինչպէս գտնէին այն տե-  
ղերը, ուր ձեան տակ կենդանի թաղւածները՝  
կոիւ էին մղում մահւան դէմ. չէ որ մէկին  
ձեան տակից փորել—հանելով՝ հեշտ էր մի  
ուրիշն աւելի խոր թաղել։

Ինչ և է, հարեան գիւղացիները շատերին  
ազատեցին ձեան տակից։ Ազատւածները յետոյ  
պատմում էին, թէ նրանց դրութիւնը էլ աւելի  
վատանում էր նրանով, որ անդադար լսում էին  
վերեւում ձիւնը փորող գիւղացիների ձայնը,  
լսում էին, թէ ինչպէս վերեկից երբեմն փորում  
էին իրենց մօտի ձիւնը, բայց ոչ ոքի չգտնելով՝  
թողնում էին այդ տեղը և ուրիշ կողմ փորել  
աշխատում. տակը մնացածները սկսում էին աղա-  
ղակել, օգնութիւն կանչել, բայց նրանց ձայնը  
անլսելի էր մնում վերեւում աշխատողների հա-  
մար։ Հանդը աղի-արցունքներ էր թափում և  
աղաչում ամենքին, որ շտապնվ փորեն ձիւնը,--  
թէպէտ առանց այն էլ ամենքը աշխատում էին  
բոլոր ոյժով՝ ձեան տակ թաղւածներին ազատե-  
լու համար։

Վերջապէս, տասերորդ օրը Հանգին յաջող-  
ւեց գտնել իր խրճիթի ծխնելոյզը։ Այս բանը  
նրան յոյս ներշնչեց. իսկոյն ականջը ծխնելոյ-  
զին դրեց և ներքեկից թոյլ ձայներ լսեց։ Այն  
ժամանակ նա ծխնելոյզով ցած իջաւ և շատ  
զարմացաւ, անհունապէս ուրախացաւ, երբ տե-  
սաւ, որ իր կինը և երեխան ողջ են և անվաս։  
Նրանց ուրախութեանը չափ և սահման չկար։  
Մի փոքր անցնելուց յետոյ կինը պատմեց ա-  
մուսնուն այն բոլորը, ինչ պատահել էր նրանց։

—Այն օրը որովհետեւ շատ էինք չարչար-  
ւել, խնր քնեցինք—պատմում էր կինը. նոյնիսկ  
չմեցինք, թէ երբ թափւեցին ձեան հիւսերը։  
Առաւոտեան դէմ մենք զարմանում էինք, որ չի  
լուսանում։ Ես փորձեցի բանալ տան դուռը,  
բայց չբացւեց։ Այն ժամանակ լուցկի վառեցի  
և ինչ տեսնեմ,—բոլոր պատուհանները ձիւնով  
են ծածկւած։ Նոր միայն հասկացանք, թէ ինչ  
է պատահել մեզ։ Շատ վայ տվինք մեր գլխին,  
շատ դէս-դէն ընկանք, բայց ոչինչ անել չկա-  
րողացանք։ Ստիպւած էինք սպասել և տեսնել,  
թէ վերջը ինչ պիտի լինի։ Մեր բախտից մեզ  
հետ ձեան տակ էր մնացել նաև մեր այծը։  
խոտ էլ կար։ Եթէ մինչը այդ այծը, —մենք  
քաղցից մեռած կլինէինք...

Այդ դժբախտութիւնը պատահած տեղում

կարելի եղաւ 60 մարդ ազատել, բայց 100 հոգի ձեան տակ թաղւած մնացին:

Թիուեռասի բնակիչները գլխաներին վայ տը-  
ւին, զղջացին, թէ ինչու կարտեցին իրենց գիւ-  
ղի վերեւմ աճած անտառը։ Բնութեան մէջ մի  
քան օգնում է մի ուրիշ բանի. այդպէս էլ՝ լեռ-  
ների լանջերում աճող անտառը թափւող ձեան  
հիւսերի առաջը կապում է։

Ներկայումս Շւէյցարիայում շատ սակաւ  
են պատահում այդպիսի դժբախտութիւններ.  
շւէյցարացիները կարողանում են իրենց պաշտ-  
պանել ձեան հիւսերից. նրանք սովորաբար իմա-  
նում են, թէ որտեղ են թափւում ձեան հիւսեր  
և այնտեղ սարի զիմաց կանգնեցնում են քարէ  
բարձր պարիսպներ և տնկում են ցցեր. դրանք  
էլ պահում են ձեան հիւսերի առաջը:

Մեր երկրի բարձր սարերից էլ, մանաւանդ  
Կովկասեան սարերից, յաճախ թափւում են ձեան  
հիւսեր և ահագին փասներ պատճառում:

## ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

1.— Շատ բարձր են Շւէյցարական Ալպերի գագաթները՝ ծածկւած յաւերժական, փայլող ձիւնով։

Շւէյցարիայի լեռնաշխարհը տարածւում է Հատակիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի միջև։  
21/4 վերստ բարձրութիւն ունեցող Ալպեան Սէն-Բեռնարդ լեռան սառցապատ կիրճերի և վիճերի միջով ձգւում է մի ընդարձակ լեռնանդք։

Հին ժամանակներից սկած մինչև օրս այդ լեռնանցքով անդադար գնում-գալիս են հազարաւոր ճանապարհորդներ։

Դաժան, անհամբոյր է այդ վայրերի բնութիւնը։ Տարւայ մէջ այնտեղ հազիւ 10 անգամ բոլորովին պարզ օր անի, —երբ մրրիկ, ձիւնախառն բուք կամ մառախուղ չլինի։ Ամենատաք օրն իսկ գիշերով ջուրը սառչում է այնտեղ...

Սէն-Բեռնարի լեռնանցքը անվտանգ է ամառը միայն, պարզ եղանակին. իսկ ձմեռը, փոթորկի միջոցին, երբ լեռան հազար ու մի փոսերը և ճեղքածքները ձիւնով ծածկւած են լինում, այստեղով գնալը ոչ միայն դժւար է, այլ նույն իսկ՝ վտանգաւոր:

Տարւայ մէջ մարդիկ քիչ անգամ միայն կա-  
լող էին անվտանգ անցնել Սէն.Բեռնարի քար-  
քարուտներով, եթէ նրանց օգնութեան չհաս-  
նէին այն տեղերում ապրող պատրաստակամ,  
մարդասէր անձեռ:

ԸՆԹԵՐՈՐԴ ԳԱՅՈՒՄ աՐդեն այդ վտանգաւոր լեռնաշխարհում բնակութիւն հաստատեցին

մի քանի կրօնաւորներ, որոնք իրենց անձը նւիրեցին դժբախտ պատահարների ենթարկւող ուղևորներին փրկելու գործին։ 962 թւականին Բեռնարդը-Մոնտոն սարկաւագը հիմնեց Սէն-Բեռնար լեռան վրայ մի վանք, օտարական մարդկանց ապաստանելու համար, ուղևորները այդտեղ ժամանակաւորապէս ստանում էն օթևան, սնունդ և ամեն տեսակ օգնութիւն։

Լեռնային այս ապաստարանում աշխատող վանականների հոգատարութեան գլխաւոր առարկան է՝ անդադար որոնել ճանապարհը կորցրած կամ կորստետն մատնւած ռողկորների։ Ամեն օր երկերկու վանականներ գնում տեսնում են լեռնանցրի ամենավտանգաւոր տեղերը։ Իսկ երբ եղանակը վատ է լինում կամ վերից թափում են ձեան հիուեր ու քարակոյտեր, այդ ժամանակ վանքից դուրս են գալիս և վտանգւած մարդկանց որոնել սկսում վեց-վեց վանականներ՝ թիակներ, պատգարակներ և կազդուրիչ խմիչք վերցրած հետները։

Սակայն դժւար, երբեմ նոյն իսկ բոլորովին անկարելի պիտի լինէին որոնումները լեռնանցքի հաստ, խորը ձեան շերտերի տակ, եթէ վանականները չունենային հաւատարիմ օգնականներ, — դրանք սէն-բեռնարեան յայտնի շներն են։


Սէն-բեռնարեան շները աչքի են ընկնում

իրենց հոտառական կարողութեամբ և բարութեամբ։ Այս շները ծանր աշխատանք են կատարում։ Նրանցից ամեն մէկը իւրաքանչիւր օր վազվում — անցնում է ահագին տարածութիւն, փնտրելով ճանապարհը կորցրած կամ ուժասպառութիւնից վայր ընկած ու յաճախ ձեան աակ մնացած ուղեւորներին։

Այս լիելօք կենդանիները իրենց բարի կամքով երբեմն օրեր շարունակ որոնում են ձիւնածածկ ճանապարհները և վիճերը։ Զեան հիւսի հանդիպելով՝ նրանք մեծ խնամքով հոտոտում, որոնում են մարդու հետք. և երբ գտնում են, անմիջապէս սկսում են փորել ձիւնը իրենց ամուր թաթերով՝ դուրս հանելու տակը մնացած ուղեւորին։

Այդ շների մէջքին կաշէ լայն գօտով կապած է լինում մահուդի կտոր, իսկ վզից կախածէ լինում խմելու գեղով լի մի սրւակ. մահուդը և դեղն էլ նրա համար են, որ փէտացած, ուժասպառ եղած ուղեւորը կարողանայ տաք բանով ծածկւել և խմիչքով կազդուրւել։

Իսկ եթէ, բան է, վանքի շներին չի յաջողւում ազատել ձեան տակ թաղւած ուղեւորին, եթէ ճանապարհին վայր ընկած և սառած ճամբորը չէ շարժւում շները նետի արագութեամբ, այդգէպում շները նետի արագութեամբ, ամենամօտ ճանապարհով, ոլանում են դէպի վանք և



Ձեան հիւսեր

բարձր հաջոցով դուրս կանչում վանականներին՝  
օդնութեան համելու պատահարի մատնւածին:

Եւ շնորհի սէն-բեռնարեան շների նուրբ-  
հոտառութեան, սրատես, խոշոր աչքերին, նրանց  
ոյժին և արագավազութեան՝ շատ ու շատ հա-  
րիւրաւոր մարդիկ են աղատւել Ալպեան սարե-  
րում անխուսափելի փորձանքից:

2.—1824 թւականին սէն-բեռնարեան շների  
մէջ ամենից աւելի աչքի էր լնկնում մէկը.  
Նրա անունն էր Աղամանդ: Վանքի մնացած բո-  
լոր շներից նա աւելի քաջ էր և հասկացող. նը-  
րանից մնացած շները, ինչպէս իրենց ուսուցչից,

առվորում էին մոլորւած ուղեորներին որոնելու  
արւեստը:

Պատահեց, որ մի անգամ սոսկալի  
բուք վեր կացաւ սարում. հեռւից լսւում  
էր վայր թափւող ձեան հիւսերի դղրդիւնը:  
Աղամանդը իսկոյն այն կողմերը վագեց՝ որո-  
նում անելու: Էեռնային մի շաւղի վրայ նա հո-  
տոտերով զգաց մարդու մօտիկութիւն և սկսեց  
բարձր ձայնով հաջել. Նրա հաջոցին արձագանք  
տւին վանքի միւս շները, և ահա վանականները  
շտապեցին դէպի «Աղամանդ»-ի հաջոցը, վեր-  
ցրած լապտերներ, լեռնային երկայն ձեռնափայ-  
տեր՝ երկաթեայ սուր ծայրերով: «Աղամանդ»-ը  
առաջնորդեց նրանց դէպի մի արահետ, որտեղ  
կըօնաւորները ձեան հիւսի տակ գտան ուշա-  
կորոյս եղած մի տղամարդու և մի կնոջ: Վա-  
նականները փաթաթւեցին այդ խեղճերին,  
պատղարակի վրայ դրին ու պատրաստւեցին նը-  
րանց վանք տանելու: Բայց մեր «Աղամանդը»  
տեղից չէր շարժւում. նա շարունակում էր հա-  
ջել և, որչափ կարող էր, աշխատում էր կան-  
գնեցնել վանականներին: Բայց էլ բան չէր ե-  
րկում. վարդապետները չհասկացան, թէ ի՞նչ է  
ուզում Աղամանդը: Նրանք չորս կողմը փորփ-  
րեցին, բայց ոչինչ չգտան. կնոջն ու տղամար-  
դուն առան վանք տարան:

«Աղամանդը»-ը մենակ մնաց. նա շարունա-

կեց ինչոք բան որոնել։ Մէկ ժամից աւելի նա  
անընդհատ փորփռում էր ձիւնը իր զօրեղ թա-  
թերով։ յոգնում էր, ապա հանգստանում, ու  
յետոյ կրկին աշխատանքի դիմում։ — այսպէս  
ահա նա վերջապէս, ձեան տակից դուրս հա-  
նեց համարեա բոլորովին սառած մի փոքրիկ  
տղայի։ «Աղամանդ»-ը սկսեց տղայի երեսը և  
ձեռքերը լիզել իր տաք լեզուվ, մինչև որ նրա  
ուշքը վրան եկաւ։ Ապա բարի շունը պառկեց  
տղայի կողքին, ջանալով տաքացնել նրան իր  
բրդոտ մարմնով։ Յետոյ նա այն դիրքով պառ-  
կեց, որ մանուկը հեշտութեամբ կարողանար  
շան վրայ բարձրանալ։ իր փաղաքանքներով  
հասաւ շունը նպատակին։ — մանու կը նստեց  
բարի գամփոփ մէջքին, բռնեց նրա բրդոտ վզից  
իր դողդողացող թաթիկներով։ Եւ այսպէս՝  
«Աղամանդ»-ը տղային ուրախ-ուրախ տարաւ-  
հասցեց վանք։

Իսկ այդ միջոցին վանքում մեծ իրարան-  
ցում էր ընկել։ Վանականների ազատած կինը  
այդ տղայի մայրն էր. երբ նա վանքում ուշքի  
եկաւ, սարսափահար եղաւ իմանալով, որ վա-  
նականները չեն ազատել երեխային։ Հենց այն  
է, նա ուզում էր վանքից դուրս վազել՝ այդ  
բուք ու բորանին սառոյցի և ձեան մէջ որոնե-  
լու իր զաւակին, որ յանկարծ երևաց Աղա-  
մանդը—թուլացած, հեալով. ուրախութիւնից

մայրը լաց եղաւ, իսկոյն վերցրեց իր երե-  
խային շան մէջքից. փոքրիկը պիհնդ-պիհնդ բռնել  
էր «Աղամանդ»-ի թաւ մազերից…

## ՀեռնաՅին Փլոխներ

Լեռների լանջերին լինում են ճեղքւածք-  
ներ. դրանք առաջանում են անձրեից, աղբբակ-  
ներից և հեղեղներից։

Ցածախ է պատահում, որ լեռան մակերե-  
ւոյթը բաղկացած է լինում այնպիսի շերտից,  
որի մէջ հեշտութեամբ է ջուր ծծւում, իսկ  
նրա տակ լինում է ուրիշ շերտ, որ ջուր չէ  
ծծում։ Այդ դէպքում ահա ներքեի շերտի վրայ  
հաւաքւում է ջուրը և աղբբակներ ու առւակ-  
ներ դարձած հոսում։ այդպիսով կամաց-կամաց  
այդ շերտը կտրւում—բաժանւում է վերին շեր-  
տերից։

Եւ ահա ստորերկրայ այդ ողողւած շեր-  
տերը և սարալանջից կարւած ժայռերը իրենց  
ծանրութիւնից հետպհետէ սկսում են դէպի ցած  
գալ։

Սկզբում նրանք շարժւում են դանդաղ, ապա  
աւելի ու աւելի արագ, վերջապէս զլորւում են  
սոսկալի արագութեամբ. ճանապարհին ամեն ինչ

ջարդում, փշրում են, ծառերը արմատախիլ անում, իրենց հետ քշում — տանում են թէ մարդկանց, թէ անասուններին և թէ տներ։ Վերջութպէս՝ քարերի, աւազի այդ ահագին զանգւածը վայր է գլորում հովիտ և յաճախ տակով անում ամբողջ գիւղեր։ Անհնարին է նկարագրել սարսափի այն զգացումը, որով բոնւում է լեռնականը, երբ նա աղաղակում է իր ընտանիքին, իր հարեաններին. «Փախչենք, սարը փլում է»։ Եւ երբ փլում է սարը, այդ միջոցին մահ է սպառնում ամեն մարդու, ամեն ինչի, որ այնտեղ մօտ է գտնւում։

2. Սարսափելի փլում տեղի ունեցաւ 1898 թւտկանի գեկտեմբեր ամսին Այրոլո գիւղի մօտ։ Այրոլոն գտնւում է հոչակաւոր Սէն-Գոթարդի տունելից \* ) (Շւէյցարիա) ոչ-հեռու։ Այս գիւղը ընկած է Սէն-Գոթարդ սարի հենց ստորոտում՝ ծովի մակերեսոյթից 544 սաժեն բարձր, փարթամ բնութեան մէջ։

Այդ դժբախտութիւնը վաղուց սպառնում էր գիւղի բնակիչներին։ Դեռ մի քանի տարի դրանից առաջ նկատել էին, որ խիստ քամիներին ենթակայ ժայռերը ամեն ըովէ կարող էին փլել և վայր գլորւել։ Բանիմաց մարդիկ խոր-

\* ) Տունելը լեռան միջով փորած անցք է, որով յաճախ երկաթուղի է գնում։

հուրդ էին տալիս ձեռք առնել հարկաւոր միջոցները, բայց էլի ոչ ոք բան չարաւ։

Դեկտեմբերի 27.ին, գիշերւայ ժամի մօտ 2.ին, Այրոլո գիւղի բոլոր բնակիչները, նաև այդ գիւղում գտնւող երկաթուղու կայարանի ծառայողները, ամենքն էլ քնած էին խոր քնով։ Արթուն էին միայն կայարանի օրապահ պաշտօնեան և պահապան ծառան։ Արագընթաց գնացքին էին սպառնում նրանք. պաշտօնեան յետ ու առաջ էր գնում կայարանի պլատֆորմով, իսկ պահապան ծառան, լապտերը ձեռին, կանգնած էր պլատֆորմի այն կողմում, ուր պիտի գար-կանգնէր գնացքը։

Խորին լոռութիւն էր տիրում ամեն կողմ։ Բայց տես, յանկարծ բաձրացաւ գառնաշունչ քամի, և Սէն-Գոթարդ սարի կողմից լսելի եղաւ ահազարզանդ, ականջ խլացնող դղրդիւն։ Կայարանի պաշտօնեան խսկնյն հասկացաւ դղրդիւնի պատճառը։ Սարսափից խելքը կորցրած՝ նաշտապեց զարթեցնելու կայարանի բոլոր ծառայողներին և, «գլխներիդ ճարը տեսէք» կանչելով, սկսեց փախչել այդ վտանգւած տեղից։

Ճանապարհին նա հանդիպեց պահապանին, սա ևս, լապտերը ձեռքին, փախչում էր՝ չիմանալով ուր։ Պահապանի դէմքին նայելով՝ պաշտօնեան յիշեց, որ մի քանի ըոպէից յետոյ տունելով պիտի գար տնցնէր երկաթուղու գնացքը։

Նա իսկոյն խլեց պահապանի ձեռքից լապտերը և, անտես անելով սպասւող սոսկալի վտանգը, անվախ յետ վազեց դէպի տունելը:

Մինչ այդ՝ սարսափելի դղբդոցը դեռ շարունակւում էր, գետինը տատանւում, քամին վզզում. չորս կողմից գալիս էին փոշու և ձեան ամպեր և ամբողջ շրջապատը սքօղում անթափանց խաւարով։ Իսկ պատանի պաշտօնեան առաջ էր վազում ամեն քայլափոխի սայթաքելով, հազիւ շունչ առնելով. Նա բան չէր տեսնում առաջը. ամեն վայրկեան կարող էր տեղնուտեղը ոչնչանալ՝ սարսափելի աղմուկով սարնիվայր ցած գլորւող մի քարաժայոի կամ ձիւնակոյտի տակ մմալով։ Սակայն նա այդպիսով կարողացաւ ժամանակին տունել հասնել և կանգնեցնել տալ գնացքը՝ դժբախտութեան վայրից մի քանի հարիւր քայլ հեռու...


Անցան մի քանի սոսկալի ժամեր դադարեցին քամին, դղբդոցը, և փլումներ վերջացտն։ Թանձր խաւարը մի փոքր ցրիւ եկաւ և գետինը դադարեց տատանւել։ [Բայց ի՞նչ. դժբախտութեան վայրը ներկայացնում էր սոսկալի տեսարան։ Ամեն կողմ թափթփած էին քարի ահագին կտորներ և ձեան հիւսեր, իսկ նրանց տակ—Այրոլի փլատակւած շէնքերը։ Այդ քաօսի մէջ այս-այն կողմ ընկած էին մահացած, վիրաւոր մարդիկ, կամ այնտեղ գլխակորոյս թափառում էին տղա-

մարդիկ, կանայք և երեխաներ. սուզ ու շիւանով, հեծկլտանքով իրենց հարազատներին էին փնտրում նրանք...

Միայն հետեւեալ առաւօտ կարելի եղաւ որոշ գաղափար կազմել այդ սարսափելի դժբախտութեան չափ ու սահմանի մասին։ Լեռան մօտ գտնւող հիւրանոցը և շատ ուրիշ տներ հիմնայատակ կործանւել էին և քարերով, ձիւով կամ աւազով ծածկւել. գիւղի մնացած շէնքերն ևս տւելի կամ պակաս չափով վնասւել էին...

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I.	Դէպի Մասիս.—1. Արշ. Միթմա- րեան, 2.—Խաչ. Աբովեան,—Երես	3—25
II.	Դարիալի կիրճը—Գ. Բաշինջա- ղեան,— . . . .	26—35
III.	Դէպի Կազբեկի գագաթը—Պոս- տոխուվ *) . . . .	35—39
IV.	Դէպի Մօնրլան սարի գագաթը— ըստ Ռէկլիուի **)	40—48
V.	Զեան հիւսեր.—ըստ Բերեպ- շի **)	49—52
VI.	Մարդկութեան բարեկամներ.— Գոբբունով—Պոսադովի **)	52—59
VII.	Լեռնային փլումներ.—ըստ Բեր- լեպշի **)	59—63



Պ. Մատէնճեան «Նոր ղպրոցի»

1909 թ. № 11-ի մէջ գրում է. «Հայոց լեզուի ու-  
սուցիչներն արդէն նկատած կլինեն, որ աշակերտները  
յաճախ տառասխաներ են անում լոկ այն պատճառով,  
որ տանը ոչ ուսուցիչ ունեն, ոչ էլ հայերէն յարմար  
բառարան, որպէսզի կասկածելի համարող բառերն  
ստուգեն և այդպիսով աստիճանաբար սովորեն ուղիղ  
զրել. ~~Հայոց արքաների անունները~~ գալիս է այս մեծ  
պակասը լրացնելու. Աւելացնենք նաև այն, որ գրքոյ-  
կի ձեւ գործածութեան համար շատ հարմար է, տպա-  
գրութիւնը մաֆուր, ուղղագրական էական կանոններն  
էլ, իբրև յաւելւած, կցւած բառարանին, ու վերջապէս,  
զինը (30 կոպ.) մատչելի բոլորին, — ապա կստանանք,  
որ հեղինակի ձեռնարկութիւնը արժանի է զովեստիւ:

---

Զնայելով վերոյիշեալ քննադատները բառգրոյ-  
կի զինը մատչելի են համարում, բայց մենք որոշե-  
ցինք իջեցնել զինը 20 կոպէկի և այդպիսով հնարաւո-  
թիւն տալ ամեն մի ցանկացողի ձեռք բերել այն:

Հոյս են տեսել և վաճառւում են

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԳԻՐՔԵՐԸ

Մասն ա. 4-րդ և մասամբ 3-րդ տարւայ դասընթաց.  
2-րդ տպագրութիւն, բարեփոխած և ձոխաց-  
րած, բազմաթիւ նկարներով: Գիշն է 60 կոպ.  
Մասն բ. Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա. 5-րդ  
տարւայ դասընթաց: Բազմաթիւ նկարներով:  
Գիշն է 65 կ.

Մասն գ. Եւրոպա. 6-րդ տարւայ դասընթաց (պատրաստ  
է տպագրութեան համար):

## ԱՇԽԱՐՀԱԳՐԸԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ


1-ին գրքոյկ.—Հրաբուղիս, երկրաշարժ, հէյզեր,—  
20 կոպ.

2-րդ գրքոյկ. Զիւնապատ լեռներ,—20 կոպ. \*)  
Դիմել գրավանառներին, կամ կազմողին՝ Թիֆլիս,  
Ներսիսեան դպրոց:

\* Ծանօթ. Այս գրքոյկի բովանդակութեան մէջ  
դուրս են մնացած հետևեալ ծանօթութիւնները՝

\*) Առնւած է պ. ե. Թաւարբէգեանի «Հայրենա-  
դիտութիւն» (Կովկաս) գրքից:

\*\*) Առնւած են «Գորբունով-Պոսադովի» Աշխ. ըն-  
թերցարանից:



NL0423045

Հայաստակի Ազգային գրադարան

20205